ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

26-ը հուլիսի, 2018թ., N21

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 26.07.2018Թ. ԹԻՎ 08 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայանիստ համայնքի ավագանու՝ 26.07.2018թ. թիվ 08 նիստի օրակարգը՝

1.Հայանիստ համայնքի ավագանու՝ 2017թ. նոյեմբերի 27-ի թիվ 44-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

2.Հայանիստ համայնքի 2018 թ. վարչական բյուջեի փոփոխությունները հաստատելու մասին:

3. Հայանիստ համայնքի ավագանու՝ 2017թ. նոյեմբերի 27-ի թիվ 42-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին

Ավագանու անդամներ՝

1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գրիգորյան Ջորիկ
4. Գևորգյան Սարգիս
5. Կատանյան Լևոն
6. Հարությունյան Իրինա
7. Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

26.07.2018թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.` (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

26-ը հուլիսի, 2018թ., N22-Ն

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2017Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով և 33-րդ հոդվածի պահանջներով՝՝ *ավագանին որոշում է՝*

Հայանիստ համայնքի ավագանու՝ 2017թ. նոյեմբերի 27-ի՝ «Հայանիստ համայնքի ղեկավարի՝ 2018թ. վարձատրության չափը որոշելու և Հայանիստի համայնքապետարանի աշխատակազմի և Մուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2018թ. թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 44-ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1. Որոշման 1-ին կետի հավելված 1-ը ավելացնել նոր տողով՝ 12-րդ կետով՝ հետևյալ բառերով. ««Հաստիքի անվանումը» սյունակում՝ «Անասնաբույժ», «Հաստիքային միավորը» սյունակում՝ «1», «Պաշտոնային դրույքաչափը» սյունակում՝ «110.000»»:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գրիգորյան Զորիկ
4. Գևորգյան Սարգիս
5. Կատանյան Լևոն
6. Հարությունյան Իրինա
7. Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

26.07.2018թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

26-ը հուլիսի, 2018թ., N23-Ն

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով և ելնելով անհրաժեշտությունից՝ *ավագանին որոշում է՝*

1.Վարչական բյուջեի ծախսային մասի փոփոխություն.

1)04.2.1 Գյուղատնտեսություն.

4111 հոդվածին ավելացնել 275.0 հազար դրամ՝ անասնաբույժի աշխատանքի համար, և պլանը հաստատել 275.0 հազար դրամ:

2)11.1.2 Պահուստայի ֆոնդ.

4891 հոդվածից պակասեցնել 275.0 հազար դրամ, և պլանը հաստատել 2834.7 հազար դրամ:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գրիգորյան Զորիկ
4. Գևորգյան Սարգիս
5. Կատանյան Լևոն
6. Հարությունյան Իրինա
7. Մկրտչյան Գևորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

26.07.2018թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

26-ը հուլիսի, 2018թ., N24-Ն

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2017Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով և 33-րդ հոդվածի պահանջներով՝ ՝ *ավագանին որոշում է՝*

Հայանիստ համայնքի ավագանու՝ 2017թ. նոյեմբերի 27-ի՝ «Հայանիստ գյուղական համայնքի տեղական տուրքերի և վճարների 2018թ. դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 42-ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1. Որոշման 1-ին մասը ավելացնել նոր տողով՝ 21-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«21)Սահմանել համայնքի տարածքում անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկը և գնացուցակը».

| | |
|---|---|
| ա.Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն | -500 դրամ |
| բ.Ծննդօգնություն | |
| ա) թեթև միջամտություն | -1000 դրամ |
| բ.)ծանր միջամտություն | -5000 դրամ |
| գ.Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմանականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում կախված կենդանու տեսակից/բացառությամբ «գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/ | -100 դրամ/մանր կենդ./<br>-200 դրամ/խոշոր կենդ./ |
| դ.Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար | -200 դրամ |
| ե.Ախտահանություն | -1քառ.մետր 200 դրամ |
| զ.Միջատազերծում /դիզինֆեկցիա/ | -1քառ.մետր 100 դրամ |
| է.Կրծողների ոչնչացում /դեռատիզացիա/ | -1քառ.մետր 200 դրամ |
| ը.Արհեստական սերմնավորում | -5000 դրամ |
| թ.Կենդանու ներձում | -1000 դրամ/մանր կենդ./<br>-3000 դրամ/խոշոր կենդ./ |
| 1. Կենդանու բուժում/յուր. այցելություն/ | -1000 դրամ |
| 2. Կենդանիների նախասպանդային զննում | -1000 դրամ/մանր կենդ./<br>-2000 դրամ/խոշոր կենդ./ |

Ավագանու անդամներ՝

1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գրիգորյան Զորիկ
4. Գևորգյան Սարգիս
5. Կատանյան Լևոն
6. Հարությունյան Իրինա
7. Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

26.07.2018թ.

գ. Հայանիստ